ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«14» սեպտեմբերի 2018 թ. № 364-Ա.

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի N 5-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին օրենքը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Հրամանի N 5 հավելվածի «Ընթացիկ ծախսեր» դասի «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ» 420000 կատեգորիայի 422000 խմբի «Դասակարգման տարրերի անվանումները» սյունակում «ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ» բառերը փոխարինել «ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ» բառերով:

2) Հրամանի N 23 հավելվածի՝

ա) «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ» բաժնում «ՀՀ կառավարության աշխատակազմ 1 01 003» տողը փոխարինել «ՀՀ վարչապետի աշխատակազմ 1 01 003» տողով:

բ) «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ այդ թվում՝	1	05	000
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն	1	05	002
ՀՀ վիճակագրական կոմիտե	1	05	003
ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	1	05	004
ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով	1	05	005
ՀՀ տնտեսական մրցակցության պաշպանության պետական հանձնաժողով	1	05	008
ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե	1	05	009
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտե	1	05	010
Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով	1	05	012
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	1	05	013
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն	1	05	014
ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտե	1	05	015
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտե	1	05	016
ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայություն	1	05	017
ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	1	05	018
ՀՀ ոստիկանություն	1	05	019
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե	1	05	020
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայություն	1	05	021
Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ	1	05	033
ՀՀ հաշվեքննիչ պալատ	1	05	034
Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ	1	05	035

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե	1	05	037
ՀՀ քննչական կոմիտե	1	05	044
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	1	05	045
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտե	1	05	046
ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն	1	05	047
ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	1	05	048
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	1	05	049
ՀՀ բնապահպանության նախարարության անտառային կոմիտե	1	05	050
ՀՀ պետական վերահսկողական ծառայություն	1	05	051
ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայություն	1	05	052
ՀՀ պաշտպանության նախարարության զինված ուժերի գլխավոր շտաբ	1	05	053
ՀՀ պաշտպանության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտե	1	05	054
ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման կոմիտե	1	05	055
ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի կոմիտե	1	05	056

»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ